ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 14 >> Հոկտեմբերի 2019թ. N ՄՊ/179-20

ք. Արմավիր

<<ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի հոկտեմբերի 8-ի N ՄՊ/392-2019 և 2019 թվականի հոկտեմբերի 8-ի N ՄՊ/394-2019 որոշումները, <<Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման–ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Ջուլիետա Միերյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Invalid signature

X

VERIFIED OCSP 10/14/2019 17:30:14 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2019 թվականի 14 հոկտեմբերի

N 179-2019 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Անդամներ՝

Ջ. Եղոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ

Գ. Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ

Հանձնող՝

Արուսյակ Մուրադյան - <<Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Նունե Աթոյան - <<Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**